

ՄՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ



ԻՄ ԱՐՑԱԽ

Իմ սիրտ, իմ «խոցված Տիրամայր»,
Աղոթքով լուսե ու խորին,
Անցա աշխարհով այս արար,
Բայց գիրկդ եկա ես կրկին:
Եկա՝ արցունքդ սրբեմ,
Համբուրեմ քո հոգին ցաված,
Անամոք վշտերդ սփռված,
Ու գրկեմ քո սիրտը խոցված:
Հավատա՝ նորից մի սուրբ օր,
Մեր Քիրսն ու Մռովը հսկա,
Կգրկեն իրար ու կրկին
Ջորեղ անունդ կթնդա:
Խնդրում եմ՝ արցունքդ սրբիր,
Ու բռնիր իմ ձեռքը ամուր,
Աշխարհում այս պիղծ ու զազիր
Շահն է կարևոր ամենուր
Դու լաց չլինես հանկարծ,
Միշտ ուժեղ եղիր ու պինդ
Ու հիշիր՝ մի օր անկասկած
Ե՛վ լույս կտեսնես, և՛ խնդ:
Իսկ հիմա եկել եմ, գրկիր,
Կարոտն է խեղդում ինձ այնպես,

ԱՍՏՎԱԾ ՄԱՐԴՈՒՆ ՄՏԵՂԾԵԼ Է ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՐ

Երբեմն մարդիկ մոլորության մեջ են լինում, չգիտեն՝ որի ցանկությամբ առաջ շարժվեն: Սակայն Աստված մարդուն ստեղծել է բանականությամբ, մտածելու ունակությամբ, և որևէ քայլ անելուց առաջ պետք է մտածել ուղեղով: Երբևէ չպետք է գերի լինել մարմնի ցանկություններին, այլ պետք է մարմինը ենթարկեցնել բանականությանը: Հաճախ մարդիկ ընտրելով մարմինը, նյութը՝ սխալ քայլեր են կատարում, որ հետք են թողնում ողջ կյանքի ընթացքում: Պետք է կարողանալ մարմինը կառավարել, հակառակ դեպքում՝ կարող ես և կործանվել:

Հաճախ մարդ սիրահարվում է՝ առանց ուշադրություն դարձնելու դիմացինի հոգուն՝

ԿՐՈՆԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Երեխա դաստիարակելու հարցում, երբ ինչ-որ տեղ ծնողը թերանում է, այդ բացը լրացնում է կրոնը կամ հայ առաքելական եկեղեցին: Հայ առաքելական եկեղեցում հոգևորականները, գրուցելով մարդու հետ, փորձում են քանդել նրա ներսում բույն դրած չարությունը:


Կարևոր է, որ մարդը, անկախ տարիքից ու սեռից, հաճախ հոգևոր դասերի, քանի որ այն օգնում է մարդուն գտնել ելք ցանկացած իրավիճակում, պարբերաբար թարմացնում է լավատեսությունը, ստիպում է մարդուն թեթևանալ և փոքր ինչ դյուրին կերպով հաղթահարել ծագած խնդիրները: Վստահաբար կարող եմ ասել, որ հայ առաքելական եկեղեցու հոգևոր սպասավորների շնորհիվ է մաև շարունակում պահպանվել ազգային արժեքները, նրանք գլխավոր խթանն են մարդու ճիշտ դաստիարակության:

Լաճա ՀԱՄԱՐԱՉՈՒՄՅԱՆ,
լրագրություն 2-րդ կուրս

Հմտածելով որ հոգու գեղեցկությունն է միայն մնայուն: Մեզանից շատերը առաջնահերթությունը տալիս են մարմնին, խնամում են մարմինը, պճնվում, իսկ հոգին՝ դափ-դատարկ, նման փոքրիկ խրճիթի, որտեղ երբեք մարդ չի ապրել: Պետք է մարմնի ցանկություններն էլ երբեմն կատարել, բայց չպետք է այնպիսին լինի, որ հոգին կեղտոտվի: Չպետք է մարմինը իշխի հոգուն: Մարդն իր մարմնին կարող է հաղթել՝ Աստծուն իր մեջ ունենալով: Հոգևոր հավատի շնորհիվ մեր հոգին կարող է հաղթել մեր մարմնին: Պետք է առաջ շարժվել հոգով, բանականությամբ՝ առաջնորդվելով բարոյական ճշմարիտ արժեքներով: Պետք է մաև սիրես քո մարմինը, դա Արարչի նվերն է քեզ: Համատեղիր հոգուդ և մարմնիդ ցանկությունները, և առաջ շարժվիր ճշմարիտ արժեքներով:



Քրիստինա ԱՂԱՄՅԱՆ,
լրագրություն 2-րդ կուրս



«Քո ժամանակը»

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Խմբագիր՝ Զ.ՍՈՒՆՅԱՆ
Համարի պատասխանատու՝
Համեստ Մկրտչյան,
լրագրություն 4-րդ կուրս

Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում
Մեր հասցեն՝ Մ.Գրչի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91



Ուզո՞ւմ ես գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան՝ նայի՛ր նրա երիտասարդությանը:
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՅ

Քո ժամանակը

№ 6
ԱՆՊՏԵՄԲԵՐ
2021

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Գ Ի Ն ՈՒ Ե Ր Գ Ը



Խաղողի այգում խաղողի վազերը ամեն տարի մեծ ոգևորությամբ էին սպասում իրենց կարծես թե մշտական հաճախորդ դարձած սիրահար զույգին, ովքեր նստում էին խաղողի վազերի կողքին և միմյանց ժամերով սեր խոստովանում: Ու գիտե՞ք՝ պատահական չէր ընտրված նրանց հանդիպման վայրը, չէ՞ որ նրանց սիրահար սրտերը հենց այդ այգում՝ խաղողաքաղի ժամանակ էին խաղողի ողկույզի ընդամենը մեկ հատիկով ճաշակել սիրո վեհ զգացումը:

Հենց այդ նույն խաղողի այգում էր, որ տղան ամեն օր աղջկա համար երգում էր «Քեզ պես անուշիկ սիրած յար ունե՛մ, Մարտակերտի սիրուն աղջիկ, էլ ի՞նչ դարդ ունեմ...»: Այդ երգից էր, որ ամեն անգամ աղջիկը ամաչելուց շիկնում էր, այդ երգից էր, որ ամեն տարի խաղողի ողկույզները դառնում էին ավելի հյուսիս և քաղցր, և հենց այդ երգն էլ դարձավ հյուսիս ողկույզներից ծնվող «խաղողի երգը»: Եվ այդպես ամեն օր փոքրիկ «տոնախմբություն» էր սիրող սրտերի և խաղողի ողկույզների միջև:

Մի օր էլ սովորականի համաձայն տղան երգում էր աղջկա համար նույն երգը՝ «Քեզ պես անուշիկ սիրած յար ունե՛մ...», բայց այս անգամ երգը մնաց անավարտ, ռումբերի պայթյունի ծայրերը ընդհատեցին աղջկա և միաժամանակ գինու երգը: Տագնապ պատեց սիրող սրտերին, նրանք հասկացել էին, որ իրենց «տոնախմբությանն» է այցելել պատերազմ անունով սև անկոչ հյուրը:

Ջուլգը հեռացավ, այգին տխուր էր: Խաղողի ողկույզները այս անգամ տղայի երգի և մեղմ քամու ուղեկցությամբ չէին օրորվում, այլ արկերի ուժեղ հարվածից անհամաչափ գետնին էին գլորվում:

Պատերազմը խաթարեց ամեն ինչ, խաղողի ողկույզները այդպես էլ գինի չդարձան, սիրող սրտերը այդպես էլ այր ու կին չդարձան, ինչքան սիրող սրտեր իրանից հավե՛րժ հեռացան:

Պատերազմն ավարտվեց, այգին էլ հանդարտվեց: Օրերը անցան, այգի այցելեց միայն աղջիկը: Չկար էլ երգող, սեր խոստովանող: Լռությունը մի պահ համակվեց ծանոթ նվագով՝ «Քեզ պես անուշիկ սիրած յար ունե՛մ...», ու կրկին երգը մնաց անավարտ, երգն այս անգամ ընդհատվեց աղջկա կարոտակեզ լացով: Պատերազմը աղջկան կիսատ էր թողել, նրանից խլել էր իր երկրորդ կեսին, իսկ միակ վայրը, որ լցնում էր աղջկա դատարկ հոգին, խաղողի այգին՝ էր, սիրող սրտերի միակ վկան:

Ողկույզներն այլևս չէին օրորվում ելևէջից, իսկ երգն ամեն անգամ խեղդող մի ցավից կիսատ էր մնում: Քաղցր ու հյուսիս գինու երգը այդպես էլ հավերժ մնաց անավարտ:

ԱՆԺԵԼԱ ՇԱՀԱՆՑ,
լրագրություն 2-րդ կուրս

Ք Ա Ո Ս

Սեպտեմբերի 26-ին արջուկս գրկել, հայրիկին բարի գիշեր էի մաղթել և փորձում էի քնել: Մթնկա գիշեր, օդը խեղդող, հոգով անհամգիստ: Ուղեղս մի կերպ անջատելուց հետո հուժկու պայթյունից, սրտի անհամգիստ թրթիռով վեր կացա տեղից՝ չհասկանալով ինչ է կատարվում, կանգնել էի և ուզում էի հասկանալ՝ այդ ինչ ծայն է, և այդ խառնիճաղանջ մտքերս ընդհատեց տատիս ծայնը. «Վայ պատերազմ է, նորից սկսել է...»: Շփոթահար դուրս եկա տնից և տեսա դիմացի անտառից մխացող ծուխը, դիմացի գյուղը՝ մառախուղի մեջ կորած, հարևանների և ընտանիքիս անդամների անհանգիստ վիճակը:

Ես չէի հասկանում պահի լրջությունը, մինչև չտեսա հորս համազգեստով: Հոգուս խորքում գիտակցում էի, որ պետք է պաշտպանի ինձ, ընտանիքս, տունս ու հայրենիքս, բայց սիրտս ու ուղեղս չէին ուզում, միայն այն վախը, որ սահմանին իրավիճակը լարված է, ստիպում էր ավելի ամուր գրկել հայրիկիս: Հայրս հանգստացրեց ինձ: Բացատրեց, որ պետք պաշտպանի հայրենիքս, որ հաղթենք:

Ամբողջ օրվա ընթացքում ինքս ինձ համոզում էի, որ երազ է, շուտով աչքերս կբացեմ, և ամեն ինչ առաջվա մամն կլինի: Ցավոք, ինչքան աչքերս լայն էի բացում, այնքան սիրտս սևանում էր: Սակայն դեպքերը այնպես զարգացան, որ ստիպված պետք է գնայի ՀՀ՝ թողնելով հայրենիքս, հայրական տունս, ընտանիքիս անդամներին, մանկությունս և սիրտս:

Երբ Վերին Հոռաթաղ ցուցամակը մնաս բարով ասաց, բացեցի պատուհանը, որպեսզի խորը շնչեմ հայրենի գյուղիս օդը: Աչքերս չչորացան ոչ մի րոպե, մեքենայի մեջ կատարյալ լռություն էր, փորձում էի մտապահել ամեն քար, ժայռ, ծառ ու թուփ:

Պատերազմի այդ 44 օրերին, շունչներս պահած, սպասում էինք խաղաղության ու հաղթանակի: Պատերազմի ընթացքում հասկացանք, թե ինչ է կոչվում ցավ, կարոտ, հարազատին կորցնելու վախ: Կարծում եմ՝ երբեք չի մոռացվում առաջին հեքիաթը, որ սովորաբար պատմում են տատիկները: Այդ հեքիաթը ամենախորհրդավորն է: Հեքիաթումս աշուն էր, սակայն այս անգամ աշունը մեզ ոչ թե տերևաթափ և անձրև տվեց, այլ արցունքներ և անդարձ կորուստներ: Հույսով սպասում էի, որ մի օր կարթնանամ և կիմանամ, որ ամեն ինչ ավարտվել է, ինչպես արթնացա և իմացա, որ սկսել է, սպասումներս ապարդյուն, հոգուս ուժեղ տագնապից, որ աչքերս բացեցի և հասկացա, որ ամեն ինչ վերջացավ: Բայց ոչ թե հպարտ կեցվածքով կանգնած, դեմքի հաղթական ժպիտով գոռալով՝

-վերջ...վերջ ...վերջացավ, հազիվ լսելի ծայնով, որ նույնիսկ շուրթերին չենք կարողանում համոզել և ստիպել ասել՝ վերջացավ պատերազմը, այն էլ՝ անդառնալի կորուստներով: Հայրենիքում վերջացել են փամփուշտները, բայց հոգիս ու սիրտս դեռ կռվում են: Միգուցե իրար դեմ: Ես այդպես էլ չգրկեցի խաղաղությունը ու վայր չդրեցի սրտիս զենքերը: Ես այդպես էլ չկանգնեցի խաղաղության կողքին ու չմեկնեցի ձեռքս՝ իբրև փրկություն...

Ես կանգնեցի պատերազմի կողքին ու նրա հետ քայլեցի՝ խաղաղությանը հակառակ: Եվ երևի ոչ ոք չառավ խաղաղության կարոտը ու կարոտ մնաց խաղաղության հոտին: Չէի կարողանում հարմարվել, ախր ինչպես անցնեմ Շուշիիս մոտով և սահմանափակվեմ հեռվից զմայլվելով, ուզում էի մտածել, որ մղձավանջ է: Վերադարձա հայրենիք այն ակնկալիքով, որ ինչպես թողել եմ հայրենիքս, այնպես էլ կընդունեմ: Անցա Շուշիիս մոտով և սահմանափակվեցի հեռվից նայելով ու հասկացա, որ էս լեն ու բոլ աշխարհի մեզ բաժին հասած ինչ-որ փոքր մասում հողը ցավում է որդուն երկնքին տված մոր սրտի պես: Եկա մայրաքաղաքս և ամեն տեղ փնտրում էի Շուշիի կապույտ ավտոբուսը, որը ինձ միշտ տուն էր հասցնում: Հույս ունեի՝ գոնե ավտոբուսը ինձ տուն կտանի: Թուլացել եմ նյարդերս, այլևս պայքարելու ուժ չունեմ: Որոշում եմ հանգիստ, բայց չեմ գտնում, փափագում եմ հեռու մնալ, չեմ կարողանում: Փորձում եմ հասկանալ՝ իմ ամբողջ կյանքս ունեմ պարտական, ոնց գտնեմ շիրիմը այն անժամոթի, գուցե և ծանոթի, որ զոհվել է ինձ համար: 2020 թվականի սեպտեմբերի 27-ից մեր կյանքը կտրուկ փոխվեց, մենք փոխվեցինք ու երբեք էլ առաջվանը չենք լինի, կապրենք երիտասարդ սերնդի կորստի ցավը սրտներումս, ովքեր իրենց կյանքը չխնայեցին մեզ համար: 2020 թվականը թող գնա և այլևս ծովից ծով անարդարությունը փոխվի ծովից ծով հայրենիքի: Պետք է ընկնել հանուն հայրենիքի, պայքարել հանուն հայ մնալու, հանուն խաղաղության: Անցյալը ցավոտ է, ներկան՝ վիրավոր, ապագան՝ ապրելու և հայ մնալու պայքար:

Սվետլանա ՊԵՏՐՈՍՅԱՆ, լրագրություն 2-րդ կուրս



ՄԱՏԱՂԻՍԻ ԱՐԾԻՎԸ

Հայրենիք-զավակ կապը երբեմն այնքան է անքակտելի դառնում, որ մեկի գոյությունը պարզապես պայմանավորվում է մյուսով, և մեկը մյուսի կարիքը մշտապես զգում է: Հայրենիքը միշտ զգում է իր նվիրյալ զավակների կարիքը: Նվիրյալներ, ովքեր իրենց կյանքն անգամ չխնայեցին հայնուն հայրենիքի: Եվ նրանց շնորհիվ է, որ այսօր ունենք սուրբ նշխար դարձած հայրենիք: Արմենն այդ տղաներից մեկն էր, ում կարիքը հայրենիքը զգում էր, ով պատրաստվել էր հրամանատարին խնդրել իրեն Արցախի ռազմաճակատ տեղափոխելու:

Արմեն Էդգարի Մարտիրոսյանը ծնվել է 2001 թ. հոկտեմբերի 7-ին Կոտայքի մարզի Արզել գյուղում: Ծառայում էր Տավուշի մարզի Իջևանի զորամասում: Արմենը յուրահատուկ անձնավորություն էր, պատանի՝ ում համար հայրենիքն ու ընկերները մի ուրիշ հասկացություն էին: Նա հայրենի հողի կանչը զգում էր մարմնի ամբողջ քիջներով, իսկ ընկերների կողքին չլինել պարզապես չէր կարող:

Հավատարիմ, պարզ ու ժպտերես՝ այսպես է բնութագրում նրան քույրը՝ Լիլիթը: Լիլիթի խոսքով՝ Արմենն ամեն ինչով հետաքրքրված պատանի էր, հարևանների տեխնիկական սարքերն ինքն էր նորոգում, «Իր մասնագիտության վարպետն էր», -ասում է նա: Նա պատմում է, որ ամեն անգամ տուն զանգելիս նոր նպատակներից էր խոսում ու

ասում, որ հենց բանակից գատուն, բոլորը հերթով իրագործելու է: Քույրը արցունքն աչքերին ասում է, որ եթե եղբոր հետ խոսելու գեթ մեկ հնարավորություն ունենար, ապա կասեր, որ կարոտել է: Կարոտել է ծայնին, ժպիտին ու իր կարիքն ամենից շատն է զգում: Մոր՝ Վարդուհու համար Արմենն անթերի է, նա քաջ գիտակցում է որդու սխրանքի կարևորության աստիճանը: Լիլիթի պատմելով մայրը Արմենի կոշիկները խնամքով փաթեթավորել, օծանելիքները հավաքել և դրել է նրա դարակում, այն, ինչ Արմենին է: Ամեն օր գրկում է որդու հագուստը, ընկղմվում նրա բույրի մեջ, կարոտն առնելու ուղիներ փնտրում, բայց գիտի, որ որդու կարոտը միայն Մատաղիսի դիրքերից կառնի, այնտեղ է սավառնում իր հերոսի արծիվ ոգին:

Արմենի մարտական ընկերոջ՝ Միքայելի հետ զրուցելիս նա հպարտությամբ պատմում է իր «Պոնչ»-ի մասին: Իր աչքերի առջև է ընկերը Արցախ մեկնելու միջոցներ փնտրել և հենց Արցախում էլ խիզախորեն կատարել մարտական առաջադրանքներ, ասում էր՝ իմ ընկերներն Արցախում, ես ինչպե՞ս կարող եմ այստեղ լինել: Ընկերներին ժպիտ պարզևողը Արմենն էր, թե մեկը տխուր էր, ապա ամեն ինչ կաներ այդ տխրությունն ուրախության վերածելու համար: Հոկտեմբերի 7-ին Արմենն իր տարեդարձը անցկացրեց ընկերների հետ, ռազմաճակատում կանգնած,



մարտական առաջադրանք կատարելով: Հոկտեմբերի 13-ն էր: Նա կանգնած էր արկերի մոտ, հմտորեն կատարում էր իրեն տրվող հրամաններն ու աչալըջորեն սպասում յուրաքանչյուր «կրակ» հրամանին: Հանկարծ թշմանու կրակի ծայնը լսելի դարձավ բոլորի համար, ամեն ինչ վայրկենապես վերածվեց ծխի ու մրի:

Միքայելն անմխիթար ցավը սրտում պահում է ընկերոջ վերջին հայացքը.

- Պոնչն ամբողջությամբ գրկիս մեջ էր ընկղմված, սրտի զարկերը թույլ էին, գնալով ավելի էին թուլանում: Մի պահ զարկերը դադարեցին...շոյում էի գլուխը, գոռում. -Պոնչ... խոսա... խնդրում եմ...խոսա Արմեն... Պոնչ...

Աչքերը թույլ բացեց, հայացք ձգեց աչքերիս ու մի կերպ արտաբերեց մի բառ...

-Ասա...

-...ու նրբորեն փակվեցին նրա աչքերը... Հերոս ընկերս անմահացավ իմ ձեռքերի մեջ:

Արմենի արծիվ հոգին իր Արցախի գրկում է՝ Մատաղիսի մատույցներում...

ԼԱՆԱ ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ, լրագրություն 2-րդ կուրս